ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ Է ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ «ԱՆԳԼԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

01.03.2023 14:20

Հարգելի՛ փաստաբաններ,

Տեղեկացնում ենք, որ ***2023թ.-ի մարտի 2-ին և 3-ին, ժամը 18:30-21:30-ն*** (ընդմիջում 19:50-20:10) ՀՀ փաստաբանների պալատը «Դայմենշն Լիգըլ Ար-Վի-Էս» ընկերության և Բրիտանական դեսպանատան հետ համատեղ կազմակերպել է վերապատրաստման դասընթացներ «**Անգլիական իրավունքի և միջազգային համապատասխանության ծրագրերի սկզբունքների խթանումը Հայաստանում**» ծրագրի վերաբերյալ:

Դասընթացը կվարեն Դավիթ Հակոբյանը («Դայմենշն Լիգըլ Ար-Վի-Էս» իրավաբանական ընկերության հիմնադիր և տնօրեն, էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամ), **Շանտանու Մաջումդարը** («Ռեդքլիֆ էնդ Չեմբերս» փաստաբանական գրասենյակի փաստաբան), **Ջեյմս Քոլինզը** («Քէնդի» իրավաբանական ընկերության գործընկեր), **Լայոնել Նիկոլսը** («4 Նյու Սքուեր» փաստաբանական գրասենյակի փաստաբան), **Նատալյա Պերովան** («Լամբ Չեմբերս» փաստաբանական գրասենյակի փաստաբան), **Գլեն Սամուելը** («Քէնդի» իրավաբանական ընկերության իրավաբան):

Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ ***մինչև 02.03.2023թ.*** ժամը 17:00-ն training.coordinator@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին մասնակցությունը հաստատող նամակ ուղարկելով և հստակ նշելով դասընթացի թեման, Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })